Դատավարական այն ինստիտուտը, որը թույլ է տալիս ապահովել խախտված իրավունքի ամբողջական վերականգնումը, ի թիվս այլնի, հետևանքների վերացման ածանցյալ պահանջի ինստիտուտն է: Այս ինստիտուտի նման գործառնական նշանակությունն է արտահայտված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) «Հետևանքների վերացման ածանցյալ պահանջը» վերտառությամբ 71-րդ հոդվածում, ըստ որի՝ վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով: Հետևանքների վերացման ածանցյալ պահանջի էությունն ու բովանդակությունը հանգում է նրան, որ ածանցյալ պահանջի միջոցով վերացվում են անձի իրավունքը կամ ազատությունը խախտած վարչարարության բացասական հետևանքները: Դատական պաշտպանության իրավունքն իրացվում է անձի իրավունքներն անմիջականորեն շոշափող և ենթադրաբար խախտող իրավական ակտի, գործողության կամ անգործության իրավաչափությունը վիճարկելու միջոցով: Իսկ ածանցյալ պահանջի իրավական նպատակն է վերացնել այն բացասական հետևանքները, որոնք առաջացել են հայցվորի իրավունքները կամ ազատություններն անմիջականորեն շոշափող և ենթադրաբար խախտող իրավական ակտի ընդունման, գործողության կատարման կամ անգործության արդյունքում, և որոնց վերացումը, ի լրումն անձի իրավունքը խախտող իրավական ակտը վերացնելու, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, անհրաժեշտ և պարտադիր է խախտված իրավունքն արդյունավետորեն վերականգնելու, այն է՝ մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու համար:

Գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գրանցում իրականացնող մարմնի իրավունքների և պարտականությունների իրավական հիմքերը, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները սահմանվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացնման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ «Օրենք»):

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն Օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը, իսկ նույն օրենքի 4-րդ գլխով նախատեսված պետական գրանցման առանձնահատկությունների դեպքերում՝ նաև այդ գլխով սահմանված փաստաթղթերը: «Իրավահաստատող փաստաթուղթ» եզրույթի բովանդակությունը բացահայտված է Օրենքի 2-րդ հոդվածում. ըստ այդ հոդվածի՝ իրավահաստատող փաստաթղթերը իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր և գույքագրման փաստաթղթերն են: Նույն հոդվածը սահմանում է նաև իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերի շրջանակը, այն է՝ իրավունքի ձեռքբերումը

հաստատող փաստաթուղթ է սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթուղթը, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերը, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտերը, դատական ակտերը, իսկ օրենքի ուժով ճանաչված իրավունքի համար՝ այդ օրենքով նման իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ և բավարար նախապայման հանդիսացող իրավաբանական փաստերը հաստատող գրավոր փաստաթղթերը:

Օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է դիմումին կից ներկայացվող այն փաստաթղթերի շրջանակը, որոնք անհրաժեշտ են իրավունքի պետական գրանցման համար: Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ իրավունքի պետական գրանցման վերաբերյալ դիմումին կից պարտադիր ներկայացվող փաստաթուղթ է իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթուղթը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմինը կասեցնում է իրավունքի պետական գրանցման վարույթը, եթե դիմումի հետ չեն ներկայացվել պետական գրանցման որոշում կայացնելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ նույն Օրենքով նախատեսված փաստաթղթերը կամ տեղեկատվությունը: Նույն Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմինը դադարեցնում է պետական գրանցման վարույթը, եթե, ի թիվս այլնի, պետական գրանցման վարույթի կասեցման սահմանված ժամկետում չեն ներկայացվել փաստաթղթեր կամ տեղեկատվություն կասեցման հիմքերը վերացնելու մասին:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմերի համադրված բովանդակությունից բխում է, որ իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ՝ ՀՀ օրենսդրությամբ կամ նույն Օրենքով նախատեսված փաստաթղթերը կամ տեղեկատվությունը չներկայացնելը բացառում է իրավունքի պետական գրանցումը: Հաշվի առնելով, որ Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթուղթ է իրավահաստատող փաստաթուղթը, վերջինիս բացակայության պայմաններում իրավունքի պետական գրանցման դիմումը բավարարման ենթակա չէ: Վերոհիշյալից բխում է, որ իրավահաստատող փաստաթղթի անվավերությունը պայմանավորում է նաև այդ իրավահաստատող փաստաթղթի հիման վրա կատարված՝ իրավունքի պետական գրանցման անվավերությունը: Այլ կերպ՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր է, եթե իրավասու մարմնի կողմից (վարչական կամ դատական կարգով) անվավեր է ճանաչվել իրավունքի ձեռք բերումը հաստատող փաստաթուղթը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «իր գործի» դատական քննության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է վերացնել այն բոլոր բացասական հետևանքները, որոնք ծագել են որպես իրավահաստատող փաստաթուղթ՝ իրավունքի պետական գրանցման հիմքում դրված ՀՀ կառավարության որոշմամբ անձի սեփականության իրավունքի խախտման արդյունքում:

Այդ բացասական հետևանքներից է ՀՀ կառավարության որոշման հիման վրա ընդունված վարչական ակտը՝ կատարված իրավունքի պետական գրանցումը:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի սեփականության իրավունքը խախտող ՀՀ կառավարության որոշումն անվավեր ճանաչելու և այդ որոշման հիմքով կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջները փոխկապակցված պահանջներ են, քանի որ միտված են միևնույն նպատակի իրացմանը, միևնույն խնդրի լուծմանը, այն է՝ անձի սեփականության իրավունքի վերականգնմանը: ՀՀ կառավարության որոշման՝ որպես իրավահաստատող փաստաթղթի, հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջն իր բնույթով ածանցյալ է ՀՀ կառավարության որոշումն անվավեր ճանաչելու հիմնական պահանջի նկատմամբ, քանզի իրավունքի պետական գրանցումը անձի սեփականության իրավունքը խախտած ՀՀ կառավարության որոշման բացասական հետևանքն է, և անձի սեփականության իրավունքը կարող է վերականգնվել միայն այդ հետևանքը վերացնելու դեպքում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած իրավունքի պետական գրանցման հիմքում ընկած ՀՀ կառավարության որոշումը և իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների նման հարաբերակցությանը՝ դատավարական նորմերը թույլ չեն տալիս այս փոխկապակցված պահանջները քննության առնել մեկ վարույթում՝ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության որոշման իրավաչափությունն ստուգվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի հատուկ վարույթի կանոններով, և Օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված գործերով ՀՀ վարչական դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին համապատասխանող ճանաչելու մասին.

2) վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն անվավեր ճանաչելու մասին.

3) վիճարկվող՝ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթը ոչ իրավաչափ ճանաչելու մասին:

Ավելին, Օրենսգրքի 71-րդ հոդվածը ածանցյալ պահանջ ներկայացնելու իրավական հնարավորություն սահմանում է միայն վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման հայցերով:

Թեև վերոհիշյալ իրավակարգավորումներով պայմանավորված՝ իրավունքի պետական գրանցման հիմքում ընկած ՀՀ կառավարության որոշումը և իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջները չեն կարող քննության առնվել մեկ վարույթում՝ այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ իրավունքի պետական գրանցումը դրա հիմքում ընկած՝ անձի սեփականության իրավունքը խախտող ՀՀ կառավարության որոշման բացասական իրավական հետևանքն է՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության որոշումն անվավեր ճանաչելն անխուսափելիորեն պետք է

հանգեցնի նաև այդ որոշման հիմքով կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելուն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում բարձրացված իրավական հարցադրումը դիտարկել նաև ՀՀ սահմանադրական դատարանի 01.12.2015 թվականի թիվ ՍԴՈ-1238 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում: Նշված որոշմամբ քննելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը՝ ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. (...) **եթե** վարչական դատարանում **անհատական վարչական ակտի** վիճարկման վերաբերյալ **գործի** քննության ժամանակ առկա է սահմանադրական դատարանի համապատասխան որոշում, որով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել **անհատական վարչական ակտի** ընդունման համար հիմք հանդիսացած նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը), կամ տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ, կամ առկա է վարչական դատարանի համապատասխան որոշում, որով տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է անվավեր, և **անհատական վարչական ակտն** ընդունվել է վերը նշված նորմատիվ իրավական ակտի հիման վրա, ապա վարչական դատարանում վիճարկվող **անհատական վարչական ակտը** համարվում է օրենքին, մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին հակասող:

Այստեղից էլ բխում է, որ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում, որպես **կոնկրետ դեպքում, անհատական վարչական ակտի** անվավերության հիմք նշված՝ օրենքին հակասելու վերաբերյալ դրույթը միաժամանակ ներառում է նաև **անհատական վարչական ակտի՝** այլ նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին հակասելու հանգամանքը, (...):

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող վարչական ակտը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված, և ըստ այդմ՝ առկա է այն անվավեր ճանաչելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով («Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով») նախատեսված հիմք նաև այն դեպքում, երբ տվյալ վարչական ակտի հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտը հետագայում դատական կարգով (ՀՀ սահմանադրական դատարանի կամ ՀՀ վարչական դատարանի կողմից) ճանաչվել է անվավեր:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե վիճարկվող իրավունքի պետական գրանցման համար հիմք հանդիսացած ՀՀ կառավարության որոշումը ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ ճանաչվում է անվավեր, այս փաստի ուժով առկա է նաև այդ որոշման հիման վրա ընդունված վարչական ակտի՝ իրավունքի պետական գրանցման անվավերության՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված հիմք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեին տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդունվել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող՝ նրանց համար ավելի բարենպաստ օրենք, և եթե դա նախատեսված է այդ օրենքով:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 124-րդ հոդվածի վերը նշված իրավակարգավորումները դատական պրակտիկայում չպետք է մեկնաբանվեն այնպես, որ իրավական խոչընդոտ ստեղծեն անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման և անձի խախտված իրավունքի (սույն դեպքում՝ սեփականության իրավունքի) վերականգնման համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի իրավակարգավորումները չեն կարող բացառել իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու իրավական հնարավորությունն այն իրավիճակում, երբ իրավունքի պետական գրանցման համար որպես իրավահաստատող փաստաթուղթ հիմք հանդիսացած՝ ՀՀ կառավարության որոշումը հետագայում դատական կարգով ճանաչվել է անվավեր:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով հայցվոր Դավիթ Մակարյանը, դիմելով ՀՀ վարչական դատարան, պահանջել է մասնակի՝ 06-006-0351-0011 ծածկագրով 5,02հա հողամասի մասով, անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի

նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 06-006-2-1 մատյանում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը 01.06.2020 թվականի վճռով հայցը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. *«Կադաստրի՝ 23.08.2017թ. N US-21/08/2017-37-0004 տեղեկանքի համաձայն՝ Սպիտակ համայնքի՝ 06-006-0351-0011 ծածկագրի տակ գտնվող 5,02 հա հողամասը ՀՀ կառավարության 01.06.2006թ. թիվ 1054-Ն որոշմամբ գտնվում է պետական սեփականություն հանդիսացող հողերից Սպիտակ քաղաքային համայնքին անհատույց փոխանցվող հողերի ցանկում: (...) 5,02 հա հողամասի նկատմամբ՝ 14.09.2006թ. Սպիտակ համայնքի անվամբ, որպես սեփականություն, կատարվել է իրավունքի պետական գրանցում:*

ՀՀ կառավարության 01.06.2006թ. թիվ 1054-Ն որոշման հիման վրա, Կադաստրում 14.09.2006թ.-ին, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 06-006-2-1 մատյանում, կատարվել է սեփականության իրավունքի պետական գրանցում Լոռու մարզի Սպիտակ համայնքի անվամբ՝ 06-006 կադաստրային համարի տակ գտնվող 5195,64 հեկտար հողամասի նկատմամբ:

(...) Դատարանն արձանագրելով, որ թեև վեճի առարկա հանդիսացող հողամասի նկատմամբ հայցվորն ունեցել է իրավահաստատող փաստաթղթեր, սակայն Կադաստրն իրավասու չի եղել գնահատելու ՀՀ կառավարության որոշման իրավաչափությունը և վերը նշված օրենքի 43-րդ հոդվածի հիմքով մերժելու այդ հողամասի նկատմամբ Սպիտակ համայնքի սեփականության իրավունքի գրանցումը»:

Վերաքննիչ դատարանը 18.04.2023 թվականի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողելով Դատարանի 01.06.2020 թվականի վճիռը՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Համադրելով վերոգրյալը սույն գործի փաստերի հետ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում իրականացված վարչարարությունն իրավաչափ է (...):*

Անդրադառնալով նաև Բողոքաբերի այն պնդմանը, որ Դատարանը անդրադարձ չի կատարել թիվ ՎԴ/9235/05/17 վարչական գործով ուժի մեջ գտնվող որոշմանը և դրա իրավական հետևանքներին, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն գործով վեճը վերաբերվում է 14.09.2006 թվականին թիվ 06-006-2-1 մատյանի տակ կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելուն, հետևաբար Դատարանի կողմից նշված ակտի իրավաչափությունը փաստացի ստուգվել է իրավահարաբերության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի իրավական նորմի լույսի ներքո, ուստի Հայցվորի ներկայացուցչի կողմից վկայակոչված թիվ ՎԴ/9235/05/17 դատական ակտը չէր կարող ազդել սույն գործով վիճարկվող՝ 2006 թվականին ընդունված ակտի իրավաչափ լինելուն:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի կողմից մատնանշված վարչական գործով կայացված դատական ակտով արտահայտված իրավական դիրքորոշումներին, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այդ իրավական դիրքորոշումները կիրառելի չեն սույն վերաքննիչ

բողոքի կապակցությամբ՝ Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշման համատեքստում»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավունքի պետական գրանցումը կատարելու համար Կոմիտեի կողմից որպես իրավահաստատող փաստաթուղթ հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 01.06.2006 թվականի «Լոռու մարզի Սպիտակի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Սպիտակ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1054-Ն որոշումը:

Սույն վիճարկման հայցը Դատարան ներկայացնելուց հետո, հայցվորը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 01.06.2006 թվականի «Լոռու մարզի Սպիտակի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Սպիտակ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1054-Ն որոշման 6-րդ հավելվածի՝ 351-011 ծածկագրով հողամասին վերաբերող կետը: ՀՀ վարչական դատարանի 31.10.2018 թվականի որոշմամբ ՀՀ կառավարության 01.06.2006 թվականի «Լոռու մարզի Սպիտակի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Սպիտակ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1054-Ն որոշման 6-րդ հավելվածի 351-011 ծածկագրով հողամասին վերաբերող կետն անվավեր է ճանաչվել: ՀՀ վարչական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ «ՀՀ կառավարությունը վիճարկվող որոշմամբ Սպիտակ համայնքին է փոխանցել inter alia դիմողին պատկանող հողամասը որպես պետական սեփականություն՝ խախտելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը և դիմողի սեփականության իրավունքը, ուստի այն պետք է ճանաչվի անվավեր՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի»: ՀՀ վարչական դատարանի 31.10.2018 թվականի որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով Դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերի բովանդակությունից բխում է, որ վերջիններս որևէ իրավական նշանակություն չեն տվել այն հանգամանքին, որ վիճարկվող իրավունքի պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթուղթը՝ ՀՀ կառավարության 01.06.2006 թվականի «Լոռու մարզի Սպիտակի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Սպիտակ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1054-Ն որոշման 6-րդ հավելվածի 351-011 ծածկագրով հողամասին վերաբերող կետն օրինական ուժի մեջ մտած

12

դատական ակտով անվավեր է ճանաչվել: Վերաքննիչ դատարանն իր այդ դիրքորոշումը հիմնավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի իրավակարգավորումներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի իրավակարգավորումները կիրառվել են այնպիսի մեկնաբանությամբ, որը թույլ չի տվել հայցվորին արդյունավետորեն իրացնել իր սեփականության իրավունքի դատական պաշտպանության իրավունքը և փաստացիորեն արգելափակել է հայցվորի խախտված սեփականության իրավունքը վերականգնելու իրավական հնարավորությունը:

Սույն գործի նկատմամբ կիրառելով վերն արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում որպես հայցվորի սեփականության իրավունքը խախտող՝ ՀՀ կառավարության 01.06.2006 թվականի «Լոռու մարզի Սպիտակի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Սպիտակ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1054-Ն որոշման 6-րդ հավելվածի 351-011 ծածկագրով հողամասին վերաբերող կետի անվավերության իրավական հետևանք, անվավեր ճանաչման էր ենթակա նաև վերջինիս հիման վրա կատարված վիճարկվող իրավունքի պետական գրանցումը, որպիսի պայմաններում հայցվորի պահանջն իրավաչափ է և բավարարման ենթակա:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումի համար Դավիթ Մակարյանը վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար համապատասխանաբար՝ 10.000 և 20.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավիթ Մակարյանի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում Դավիթ Մակարյանի հայցը ևս ենթակա է բավարարման, գտնում է, որ սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է լուծվի հետևյալ կերպ՝ Կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումից հօգուտ Դավիթ Մակարյանի պետք է գանձվի ընդհանուր 34.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի, վերաքննիչ ու վճռաբեկ բողոքների համար սահմանված և նախապես վճարված պետական տուրքի գումար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.04.2023 թվականի որոշումը և փոփոխել այն. Դավիթ Մակարյանի հայցն ընդդեմ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային

ստորաբաժանման, երրորդ անձ՝ Սպիտակի քաղաքապետարան՝ գույքի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել: Մասնակի՝ 06-006-0351-0011 ծածկագրով 5,02հա հողամասի մասով, անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 06-006-2-1 մատյանում 14.09.2006 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

2. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումից հօգուտ Դավիթ Մակարյանի բռնագանձել 34.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի, վերաքննիչ ու վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Այլ դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

Զեկուցող _____ **Լ. ՀԱԿՈԲՅԱՆ**

_____ **Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

_____ **Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ**

_____ **Ք. ՄԿՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՎԿԱՅԱԿԱՆ

Ժամանակավոր վկայականը տրված է Գյումրի - Լենինյան
/սեփականատիրոջ անունը, հայրանունը
ազգանունը/ - ք. Ալեքսանդր - Շառաֆի 11.

Հաստատվում է նրան սեփականության իրավունքով 6 (վեց) հա:
Ալեքսանդր գեղ. գյուղատն. հողային կադաստրի N 1 - թաղամաս և 1 հա տնամերձ.
/հողատարածության գտնվելու վայրը/
Հողամաս, գյուղատնտես գյուղատնտես գնդեցության կադաստրային հաշվառման. 5 հմգ հեռ.

Համաձայն հասանելիքի /նվերում 1/ և հողային ռեեստրի ու սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշման, 1991թ. ապրիլի 9, 199 թվականի արձանագրություն նո 9:

Ժամանակավոր վկայականը զուրկ է հողի սեփականության, իրավունքի ժամանակավոր վկայականների հաշվառման գրքում 501 համարի ներ:

Ժամանակավոր վկայականը ենթակա է փոխանակման հողի սեփականության իրավունքի պետական ակտի հետ:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՏԵՂԱՅԻՆ /ՀԵՂԻՆԱՅԻՆ, ՇԱՀԱԲԱՇԻՆ,
ԱԳԱՆՅԱՆԻՆ, ԵՐԶԱՆՅԱՆԻՆ/ ՀՈՂԱՅԻՆ
ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎՈՒՐԻՆ ՎԱՐԱԳԻՆ՝ ՊՏ.

/Ա.Ի.Հ./ Ա. Վանեցյան

,,1,, հունիսի

Ալեքսանդր գեղ. գյուղատն. գրասենյակ.

Գլխավոր գրասենյակի գլխ. մասնագետ Լ. Պողոսյան

Գլխավոր մասնագետ Լ. Հովսեփյան